ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1019-Ա/2 **11.08.2020թ**

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Ալեքսանդր Հարությունյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական համերգաշարի կազմակերպման նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Ալեքսանդր Հարությունյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական համերգաշարի կազմակերպման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն հոբելյանական ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 2499,6 (երկու միլիոն չորս

հարյուր իննսունինը հազար վեց հարյուր) հազար դրամ՝ Ալեքսանդր Հարությունյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական համերգաշարի կազմակերպման ծախսերն ապահովելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հայաստանի երգի պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության ժամանակակից արվեստի և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազմման և ստորագրման գործառույթները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

Նախարար Արայիկ Հարությունյան

X

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

11 օգոստոսի 2020 թ.

N 1019-Ա/2 հրամանի

ԾՐԱԳԻՐ

Ալեքսանդր Հարությունյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական համերգաշարի կազմակերպման

1.	Կազմակերպության անվանումը	«Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ
2.	Կազմակերպության գտնվելու վայր	Երևան, Խանջյան 13/1
3.	Ծրագրի անվանում	Ալեքսանդր Հարությունյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական համերգաշար
3.1	Բովանդակություն	Ալեքսանդր Հարությունյանի 100-ամյա հոբելյանին նվիրված համերգաշարը երաժշտարվեստի ոլորտում փոխգործակցության, համատեղ ստեղծագործական աշխատանքի, գործնական հմտությունների ձեռքբերման, մարզերում մշակութային կյանքի աշխուժացման, փորձի փոխանակման կարևոր հարթակ ստեղծող և դրա գործունեությունն ապահովող նախագիծ է: Ծրագրի շրջանակներում կիրականացնեն 4 միջոցառում, մասնավորապես՝ նախատեսվում է ՀՀ մարզերումգ ործող 4 երաժշտական ուսումնական հաստատություններին կից բացօթյա հատվածներում իրականացնել համերգային ծրագիր: Յուրաքանչյուր համերգ կուղեկցվի նաև դասախոսություններով, որի շրջանակներում կներկայացվի ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր կոմպոզիտորի և նրա ստեղծագործության պատմությունը, կխոսվի համաշխահային և հայ երաժշտարվեստում այդ ստեղծագործությունների դերի, նշանակության, կարևորության մասին: Համերգից հետո արտիստները կպատասխանեն ունկնդրի հարցերին: Ծրագրի շրջանակներում երգչուհի Վարսենիկ Ավանյանըկ ներկայացնի հայկական, ռուսական, արևմտաեվրոպական կոմպոզիտորների հանրահայտ կամերային ստեղծագործություններ՝ շեշտադրումը կատարելով Ալեքսանդր Հարությունյանի թողած հարուստ ժառանգության վրա:

3.2	Նպատակ	Դասական երաժշտության տարածում, ճանաչում, մատչելի դարձնել այն ՀՀ մարզերում բնակվող երիտասարդներին, ներգրավել նրանց մշակութային միջոցառման մեջ և բացահայտել նոր տաղանդներ: Ծրագիրը նպատակներց է նաև ճանաչողական, բացատրական մի ջոցառումների միջոցով բացահայտել շատերի համար անհայտ Ալեքսանդր Հարությունյանին, նրա վոկալ ստեղծագործություններին, որը կնպաստի երեխաների գեղագիտական դաստիարակությանը: Ծրագրի շրջանակներում՝ կներկայացվի նաև կոմպոզիտորի ստեղծագործական ուղին, նրանց կյանքը, ապրած ժամանակաշրջանը, իսկ մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում արտահայտել իրենց տպավորություններն ու զգացումները համերգների վերաբերյալ:
3.3	Անցկացման ժամկետ	Օգոստոս 14-ից - սեպտեմբեր 30-ը, 2020թ.
3.4.	Անցկացման վայր	• ՀՀ Տավուշի մարզ, Բերդ համայնք • Աշտարակի երաժշտական դպրոց • Վանաձորի Է. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոց • Գյումրու Կարա-Մուրզայի անվան երաժշտական քոլեջ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Բոլոր համերգները կներկայացվեն բացառապես կենդանիկատարմամբ և նվագակցությամբ, որն էլ ավելի արդյունավետ կլինի որակյալ երաժշտության տարածման գործում: ՀՀ մարզերում առաջին անգամ կներկայացվի Ալեքսանդր Հարությունյանի ռոմանսները և Դլե յամանի մշակումը՝ նվիրված մեծանուն երգչուհի Լուսինե Զաքարյանին: Մարզերի բնակիչները բացառիկ հնարավորություն կունենան ունկնդրելու Հարությունյանի՝ հազվագյուտ կատարվող ստեղծագործությունները: Մի քանի համերգներին մասնակցություն կունենա ՀՀ վաստակավոր արտիստ, ջազմեն Վահագն Հայրապետյանը: Նա կլինի համերգի հատուկ հյուրը, որտեղ կներկայացնի դասական գործերը ժամանակակից, ջազային սինթեզով, որը նույնպես կխթանի դասական երաժշտության տարածմանը և ավելի հեշտ ընկալմանը: Սույն ծրագիրը հնարավորություն կտա մարզերի բնակիչների, հատկապես՝ երիտասարդներիևերեխաներիշրջանում ճաշակի ձևավորմանը:
3.6.	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	2020 թ. նախատեսվում է 4 համերգային ծրագիր